

**«2017Թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ 8-ՐԴ ՄՐՑԱՇԱՐԻ
V ԸՆՏՐԱԿԱՆ ՓՈԽԼ**

«2017թ. ՀՀ Լավագույն հաշվապահ» անվանակարգում հայտարարված մրցույթի 8-րդ մրցաշրջանի 5-րդ ընտրական փուլին ներկայացվում է մեկ հարցաշար և մեկ խնդիր:

Հարցաշարը բաղկացած է 10 հարցից: Յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխան գնահատվում է 2 միավոր, իսկ սխալ պատասխանը՝ 0 միավոր: Հարցաշարի բոլոր հարցերի ճիշտ պատասխանի դեպքում մասնակիցը կստանա ընդհանուր հաշվով 20 միավոր:

Խնդիրը բաղկացած է 1 հարցից և 1 առաջադրանքից: Հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 10 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր, իսկ առաջադրանքը ճիշտ լրացնելու դեպքում կստանաք 5 միավոր, սխալ լրացնելու դեպքում՝ 0 միավոր:

Հարցաշարի և խնդրի ընդհանուր միավորների թիվը կազմում է 25 միավոր:

Հինգերորդ փուլին ներկայացված հարցաշարից և խնդրից, ինչպես նաև I-V փուլերի հաշվով առավել բարձր միավոր հավաքած մասնակիցների անունը, ազգանունը, միավորների թիվը (աճման կարգով) կտպագրվի ամսագրի հաջորդ համարներում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակիցը դառնա հաղթողի որոշման գործընթացին:

Հինգերորդ փուլին ներկայացված հարցաշարի և խնդրի պատասխաններն ուղարկել press@gortsq.am էլեկտրոնային հասցեին մինչև 2017թ. նոյեմբերի 25-ը: Առաջադրանքների ճիշտ պատասխանները կտեղադրվեն www.gortsq.am կայքէջում 2017թ. նոյեմբերի 26-ին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ – Մրցանակաբաշխությունը, պատվոգիրը, հաշվապահական հաշվառման միջազգային խորհրդանիշով ոսկեպատ շքանշանը, հուշանվերը և վկայական հանձնելու արարողությունը տեղի կունենա 2018 թվականի փետրվարին՝ Ծաղկածորում:

«2017Թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ

ՄՐՑՈՒՅԹԻ V ՓՈԽԼԻ ՀԱՐՑԱՇԱՐԻ

1. Նշվածներից ո՞րը ապրանքների վաճառքից հասույթի ճանաչման համար անհրաժեշտ պայման չի հանդիսանում՝

ա) վաճառողը գնորդին է փոխանցում վաճառված ապրանքների սեփականության իրավունքը.

բ) հասույթի գումարը հնարավոր է արժանահավատորեն չափել.

գ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կիոսեն կազմակերպություն.

դ) գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսումները հնարավոր է արժանահավատորեն չափել:

2. Արտերկրյա միավորի ֆինանսական հաշվետվությունները՝

ա) ընդհանրապես չպետք է վերահաշվարկվեն.

բ) ընդհանրապես չպետք է վերահաշվարկվեն, բացառությամբ այն դեպքերի, երբ արտարժույթի փոխարժեքային տարբերությունները էական են.

գ) ընդհանրապես չպետք է վերահաշվարկվեն, բացառությամբ այն դեպքերի, երբ արտերկրյա միավորը դասակարգվում է որպես արտերկրյա գործակալ.

դ) նշված բոլոր պատասխաններն էլ սխալ են:

3. Վերը նշված ծախսումներից որը միանշանակորեն չի ներառվում հիմնական միջոցների սկզբնական արժեքում (ինքնարժեքում)՝

- ա) սիմնական միջոցների կառուցման համար օգտագործված գումարների գծով փոխառության ծախսումները.
- բ) հիմնական միջոցների ձեռք բերման հետ կապված անուղղակի հարկերը.
- գ) հիմնական միջոցների տեղակայման ծախսումները.
- դ) նշված բոլոր ծախսումներն էլ կարող են ներառվել հիմնական միջոցների սկզբնական արժեքում:

4. Հետաձգված հարկային ակտիվները (պարտավորությունները) հաշվապահական հաշվեկշռում ներկայացվում են՝

- ա) որպես ընթացիկ ակտիվներ (պարտավորություններ).
- բ) որպես ոչ ընթացիկ ակտիվներ (պարտավորություններ).
- գ) ընթացիկ հարկային ակտիվների (պարտավորությունների) հետ նույն տողային հոդվածում.
- դ) նույն դասակարգմամբ, ինչ հետաձգված հարկի գծով ծախսը:

5. Հումքի ձեռք բերման համար տրված, արտարժույթով արտահայտված կանխավճարի գծով փոխարժեքային տարբերության արտացոլում (արտարժույթի փոխարժեքը դրամի նկատմամբ աճել է).

- ա) Դեբետ 725 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից ծախսեր»

Կրեդիտ 224 «Տրված ընթացիկ կանխավճարներ».

- բ) Դեբետ 224 «Տրված ընթացիկ կանխավճարներ»
Կրեդիտ 625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից եկամուտներ».
- գ) Դեբետ 224 «Տրված ընթացիկ կանխավճարներ»
Կրեդիտ 342 «Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)»:

6. Վերամշակման նպատակով դուստր ընկերությանը հանձնված նյութերի արտացոլում.

- ա) Դեբետ 521 «Կրեդիտորական պարտքեր գնումների գծով»
Կրեդիտ 211 «Նյութեր».
- բ) Դեբետ 711 «Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք»
Կրեդիտ 211 «Նյութեր».
- գ) Դեբետ 211 «Նյութեր»
Կրեդիտ 211 «Նյութեր»:

7. Սեփական բաժնետոմսերի գնման արտացոլում.

- ա) Դեբետ 232 «Վաճառքի համար մատչելի ընթացիկ ֆինանսական ակտիվներ»
Կրեդիտ 251 «Դրամարկղ».
- բ) Դեբետ 312 «Զվճարված կապիտալ»
Կրեդիտ 251 «Դրամարկղ».
- գ) Դեբետ 313 «Հետ գնված կապիտալ»
Կրեդիտ 251 «Դրամարկղ»:

8. ՊՈԱԿ-ին կանաչապատման ծառայությունների մատուցման նպատակով տրամադրված գումարները ԱԱՀ-ով հարկվելու է արդյոք, եթե ՊՈԱԿ-ի նախորդ տարվա շրջանառությունը ծառայությունների մատուցման գծով կազմել է 60 մլն. դրամ:

ա) այո, հարկվելու է.

բ) ոչ, չի հարկվելու:

9. Եթե ՀՀ-ում գրանցված կազմակերպությունը ոչ ռեզիդենտ կազմակերպության կոմից գովազդային ծառայություն է ստանում 78 մլն. դրամի, ապա ինչպիսի՞ հարկային պարտավորություններ կառաջանա ստացող կազմակերպության կողմից՝

ա) որևէ հարկային պարտավորություն չի առաջանա.

բ) ԱԱՀ և ոչ ռեզիդենտի շահութահարկ.

գ) միայն ոչ ռեզիդենտի շահութահարկ.

դ) միայն ԱԱՀ:

10. ՀՀ ռեզիդենտ հանդիսացող ՍՊԸ-ն արտերկրում իրականացրել է կանխիկ գնում, որի մասով միանգամյա գործարքի արժեքը կազմել է \$3000, սակայն կան վճարումը հավաստող փաստաթղթեր, ըստ որի կազմակերպությունը վճարումը կատարել է տարբեր ժամանակահատվածներում և մեկանգամյա վճարումներից ամենա խոշորը չի գերազանցել \$400-ը: Արդյոք կա դրամարկղային գործառնությունների մասին ՀՀ օրենքի խախտում:

ա) այո, խախտվել է օրենսդրության պահանջը.

բ) ոչ խախտում չկա, քանի որ մաս-մաս վճարումներ են եղել:

«2017Թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՅՈՒՅԹԻ V ՓՈԽԻ ԽՆԴԻՐԸ

ԽՆԴԻՐ

ԱՅ-էֆ-ԶԻ ՍՊԸ-ն հիմնադրվել է 01.07.2015թ.-ին 1000 000դր. կանոնադրական կապիտալով ստեղծված օրվանից կազմակերպությունը մատուցել է շինմոնտաժային աշխատանքներ և հիմնադրման ժամանակվանից աշխատել է հարկաման ընդհանուր դաշտում: 31.12.2016թ.-ի դրությամբ զուտ ակիվները կազմել է 758 հազ. դր.:

Ընկերության հաշվապահական հաշվառման համակարգում 31.12.2016թ._ի դրությամբ եղղել է հետևյալ տեղեկատվությունը:

	Եկամուտներ	գումար հազ.
1	իրացումից եկամուտ՝ առանց անուղղակի հարկեր	118 780
2	իրացումից եկամուտ ՀՀ տարածքից դուրս՝ առանց անուղղակի հարկեր	5 800
3	ընկերությանը պատկանող շենքի վարձավճար	7 800
4	օտարերկրյա պետությունում գտնվող կազմակերպությանը տրամադրված փոխառությունից եկամուտ	590
5	ստացված շահաբաժիններ	18 000
6	ՀՀ տարածքում տրամադրված փոխառություններից եկամուտ	15 600
7	ՀՄ օտարումից եկամուտ	85 700
	Ընդ եկամուտ	252 270

	ծախսեր	գումար հազ.
1	մատուցված ծառայության հետ անմիջականորեն կապված ծախսեր	95 600
2	ոչնչացված՝ փաստաթղթերով հիմնավորված կորուստներ	860
3	ՀՀ կազմակերպություններից ստացված փոխառության գծով տոկոսային ծախսեր	15600
4	փաստաթղթերով չհիմնավորված գումարներ /այդ թվում եկամտային հարկը/	33 560
5	արտահագուստի գծով ծախսեր	1520
6	օտարված ՀՄ-ի հաշվեկշռային արժեք	32560
7	Վարկային կազմակերպություններից ստացված վարկի տոկոսային ծախսեր	26 520
8	Գերմանիայում գտնվող կազմակերպությանը տրամադրված կանխավճարի անհուսալի ճանաչման հիմքով դուրսգրում	8560
9	Վարձակալությամբ ստացված արտադրական տարածքի գծով ծախսեր	152

1. Ընկերությանը պատկանող շենքի կադաստրային արժեքը կազմում է 56 000 հազ. դրամ, որը տրամադրվել է վարձակալության 01 հունիդի 2016թ.-ից, 1 տարի ժամկետով:
2. 12 դեկտեմբերի 2016թ.-ին ձեռք է բերվել համակարգիչներ 12 հատ յուրաքանչյուրը 270 հազ. դրամով, սակայն չահագործվել է միայն 4-ը:
3. Հաշվետու ժամանակահատվածում գույքագրմամբ հայտնաբերվել է ավելցուկ և պակասորդ: Համեմատելի հանգամանքներում համապատասխանաբար 450 հազ. դրամ ավելցուկ և 75 հազ. դրամ պակասորդ:
4. Փաստաթղթերով չհիմնավորված ծախսերը կատարվել են մայիս-հունիս ամիսներին:
5. Վարձակալությամբ ստացված ՀՄ-ի կադաստրային արժեքը կազմում է 102 500 հազ. դրամ:

Համապատասխան հաշվարկների հիման վրա, որոշել 2016թ.-ի հարկվող շահույթը/վնասը/:

ՊԱՏԱՍԽԱՆ

	Եկամուտներ	Ֆինանսական հազ. դրամ	հարկային հազ. դրամ
1	իրացումից եկամուտ՝ առանց անուղղակի հարկեր	118 780	118 780
2	իրացումից եկամուտ ՀՀ տարածքից դուրս՝ առանց անուղղակի հարկեր	5 800	5 800
3	ընկերությանը պատկանող շենքի վարձավճար	7 800	7 800
4	օտարերկրյա պետությունում գտնվող կազմակերպությանը տրամադրված փոխառությունից եկամուտ	590	590
5	ստացված շահաբաժիններ	18 000	18 000
6	ՀՀ տարածքում տրամադրված փոխառություններից եկամուտ	15 600	15 600
7	ՀՄ օտարումից եկամուտ	85 700	85 700
	Ընդ եկամուտ	252 270	252 270
	Ծախսեր	Ֆինանսական հազ. դրամ	հարկային հազ. դրամ
1	մատուցված ծառայության հետ անմիջականորեն կապված ծախսեր	95 600	95 600
2	ոչնչացված՝ փաստաթղթերով հիմնավորված կորուստներ	860	860
3	ՀՀ կազմակերպություններից ստացված փոխառության գծով տոկոսային ծախսեր	15600	1516

4	փաստաթղթերով չհիմնավորված գնումներ /այդ թվում եկամտային հարկը/	33 560	6000
5	արտահագուստի գծով ծախսեր	1520	1520
6	օտարված ՀՄ-ի հաշվեկշռային արժեք	32560	32560
7	Վարկային կազմակերպություններից ստացված վարկի տոկոսային ծախսեր	26 520	6822
8	Գերմանիայում գտնվող կազմակերպությանը տրամադրված կանխավճարի անհուսալի ճանաչման հիմքով դուրսգրում	8560	0
9	Վարձակալությամբ ստացված արտադրական տարածքի գծով ծախսեր	152	152
10	ստացված շահաբաժիններ		18 000
11	համակարգիչների ամորտիզացիա		1080
	Ընդամենը ծախսեր	214932	164110

Հաշվետու տարվա հարկվող շահույթը կլինի՝ $252270 - 164110 = 88\,160$